Հովհաննես Թումանյան

Չարամիտներին

Դո՛ւք, մեծ հայրերի ընկած զավակներ,
Դո՛ւք, ո՜վ ստրուկներ մոլի կրքերի,
Դուք, ո՜վ զեխության խղճալի հյուրեր,
Որ շվայտ կյանքին դարձել եք գերի.

Դո՛ւք, որ ընկնում եք ո՛չ պատերազմում
Թշնամու սրով և ո՛չ ձեր մահով,
Որ եղբայրադավ ժողով եք կազմում
Եվ տեսնող աչքից կարծում ապահով:

Դո՛ւք, որ պատրաստ եք անմեղին կապած

Սեղանավորի ոտքի տակ զոհել,
Որ ավազակի առաջ սարսափած,
ճշմարտությունն եք ուրանում խոսել.

Դո՛ւք, որ ուզում եք աշխարքին խաբել,
Եվ դատաստանի առաջ դողալով

Գիտեք կեղծավոր արտասուք թափել
Չարությամբ լեցուն, հանցավոր սրտով.

Դո՛ւք, որ մարդկանց աչքերն եք կապում,
Ո՞վ սպասավորներ բանտի, խավարի,
Որ հարազատի արյունն եք թափում

Եվ ձեր եղբոր գույքն առնում ավարի.

Դո՛ւք, որ այրիի դառն արտասուքով
Շաղախեցիք ձեր սեղանի հացը,
Որ հպարտացած անօրեն գործքով
Հարցանում եք թե՝ ո՞ւր է աստվածը.

Կրհասնի նա ձեզ, բարկությամբ արդար
Արժանի մահով պատուհասելու,
Եվ ո՞վ պիտի ձեզ ցույց տա ճանապարհ
Նորա բարկության պատժից փախչելու:

1890